ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/24, 11.02.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Խաչպար» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20» բաց մրցույթ

Գնման առարկան՝ Քիմիական նյութերի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ Արգելել «Նորք-Մարաշ» ԲԿ» ՓԲԸ-ի «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ մատակարարման պայմանագիր կնքել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20» ծածկագրով բաց մրցույթի հրավերի թիվ 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասերով:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ.ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում,

իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԲՈՂՈՔ

1) Բողոք բերող անձ՝ <<Խաչպար>> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ռաֆֆու 33/7
2) Պատվիրատուի անվանումը՝ <<Նորք-Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Ա. Արմենակյան 108/4

3) Գնանշման հարցման ծածկագիրը՝ « *ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20*»
և առարկան՝ <<Քիմիական նյութերի ձեռք բերում>>

4) Վեճի առարկան և բողոք ներկայացնող անձի պահանջը՝

Տեղեկացնում եմ Ձեզ, որ <<Նորք-Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ -ն <<Քիմիական նյութերի>> ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել <<ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20>> ծածկագրով բաց մրցույթի մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2019 թ. դեկտեմբերի 4-ի թիվ 1 որոշմամբ՝ (կից փաստաթուղթ թիվ 1), որի Հրավերով պահանջվում են թվով 12 ապրանքներ (կից փաստաթուղթ թիվ 2):

03.02.2020թ. <<ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20>> ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովն իր թիվ 4-րդ նիստի արձանագրության թիվ 3-րդ կետով որոշել է <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչել Հրավերի թիվ 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասերով (կից փաստաթուղթ թիվ 3, արված նշումները) և հայտարարություն է հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին (կից փաստաթուղթ թիվ 4, էջեր՝ 1-2, արված նշումները):

<<Խաչպար>> ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ <<Նորք-Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ -ի <<ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20>> ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2020թ. փետրվարի 3-ի թիվ 4-րդ նիստի արձանագրության թիվ 3-րդ կետով <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ին Հրավերի թիվ 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասերով հաղթող մասնակից ճանաչելու և <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ի հետ Հրավերի թիվ 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասերով պայմանագիր կնքելու որոշումները, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է Ձեզ՝ ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝

Ընդունելու որոշում, որը կարգելի <<Նորք-Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ -ի <<ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20>> ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ մատակարարման պայմանագիր կնքել <<ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20>> ծածկագրով բաց մրցույթի Հրավերի թիվ 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասերով:

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝

1) Համաձայն <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից <<ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20>> ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ներկայացված Հավելված 1.1-ի՝ <<Առաջարկվող ապրանքի>> <<անվանումը>> սյունակներում Հրավերի թիվ 7-րդ չափաբաժնի մասով առաջարկվող <<Ախտահանիչ նյութ>>-ի անվանումը գրված է <<Պրեսեպտ, 2,5 գ.>>, ծագման երկիրը՝ <<ԱՄՆ, Մեծ Բրիտանիա>>, իսկ Հրավերի թիվ 7-րդ չափաբաժնի մասով առաջարկվող <<Ախտահանիչ նյութ>>-ի անվանումը գրված է <<Դեզիտաբս>>, ծագման երկիրը՝ <<ՌԴ>>, որոնց <<տեխնիկական բնութագրերը>> սյունակներում առկա տվյալները ամբողջությամբ համընկնում են՝ արտատպված են (կից փաստաթուղթ թիվ 5, արված նշումները), մրցույթի Հրավերի <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ>> Հավելված թիվ 1-ի <<Գնման առարկայի տեխնիկական և որակական

բնութագրերը>> սյունակներում Հրավերի թիվ 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասերով առկա տվյալներից (կից փաստաթուղթ թիվ 6, արված նշումները):

2) Համաձայն <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից <<ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20>> ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ներկայացված Հավելված 1.1-ում առկա տվյալների և Հրավերի թիվ 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասերով պահանջվող տվյալների

ա) այդ 2 չափաբաժինների մասով պահանջվող և առաջարկվող՝ ախտահանիչ նյութեր հանդիսացող, ապրանքները ունեն ինչպես միևնույն ազդող նյութերը, այնպես էլ միևնույն ֆունկցիոնալ հավելումները;

բ) այդ 2 չափաբաժինների մասով պահանջվող և առաջարկվող՝ ախտահանիչ նյութեր հանդիսացող, ապրանքները արտադրվում են միևնույն՝ հաբերի տեսքով, սակայն որոնք կիրառվում են ոչ թե հաբի տեսքով, այլ այդ հաբերը՝ միևնույն ձևով՝ ջրում լուծելիս ստացվող աշխատանքային լուծույթների տեսքով;

գ) այդ 2 չափաբաժինների մասով պահանջվող և առաջարկվող՝ ախտահանիչ նյութեր հանդիսացող, ապրանքների հաբերը ջրում լուծելիս անջատում են միևնույն՝ ակտիվ քլոր, ազդող նյութը;

դ) այդ 2 չափաբաժինների մասով պահանջվող և առաջարկվող՝ ախտահանիչ նյութեր հանդիսացող, ապրանքները օժտված են միևնույն հակամանրէային ակտիվությամբ և ցուցաբերում են միևնույն հակամիկրոբային ազդեցությունը տուբերկուլոզի, հատուկ վտանգավոր ինֆեկցիաների, սնկերի և վիրուսների նկատմամբ:

3) Համաձայն <<Դրեսեպտ հաբեր>>-ի (կից փաստաթուղթ թիվ 7, էջեր՝ 1-2, արված նշումները) և <<Դեզիտաբս հաբերի>>-ի (կից փաստաթուղթ թիվ 8, էջեր՝ 1-6, արված նշումները) կիրառման մեթոդական հրահանգներում առկա տվյալների, այդ հաբերի 1 հատը 10 լիտր ջրում լուծելիս առաջացնում են՝ աննշան տարբերությամբ՝ 0,014 և 0,015 տոկոսանոց, աշխատանքային լուծույթներ, որոնք ունեն միանման և միևնույն մանրէասպան հատկությունները, կիրառվում են միանման և միևնույն նպատակներով՝ միանման և միևնույն ոլորտներում:

Վերոգրյալ փաստերն ու համեմատությունները, ներկայացված փաստաթղթերը հստակ և աներկբա ձևով ապացուցում են, որ Հրավերի թիվ 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասերով հաղթող մասնակից ճանաչված <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից առաջարկված ապրանքները թեև ունեն տարբեր ֆիրմային անվանումներ, արտադրվում են տարբեր արտադրողների կողմից՝ տարբեր կշռաչափեր ունեցող հաբերի տեսքով, սակայն այդ 2 ապրանքները կիրառվում են ոչ թե հաբերի տեսքով, այլ աշխատանքային լուծույթների տեսքով, որոնք ստացվում են այդ տարբեր կշռաչափերի 1 հաբը 10 լիտր ջրում լուծելիս, այդ տարբեր անվանումներ ունեցող հաբերը պարունակում են միևնույն ազդող նյութը, որը ջրում լուծելիս անջատում է միևնույն ակտիվ քլորը, իսկ այդ աշխատանքային լուծույթները ունեն միանման և միևնույն մանրէասպան հատկությունները, կիրառվում են միանման և միևնույն նպատակներով՝ միանման և միևնույն ոլորտներում, այսինքն՝ դրանք փաստացի համարվում են լիովին համարժեք ապրանքներ, ուստի պետք է հանդիսանան գնման մեկ առարկա:

Համաձայն ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջի՝ <<

Հոդված 25. Գնումների բաժանման կամ խմբավորման և գնման առարկայի բնութագրերի փոփոխման անթույլատրելիությունը

1. Մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է՝

1) մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով.>>

Համաձայն <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից <<ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20>> ծածկագրով բաց մրցույթին ներկայացված <<Գնային առաջարկ>> Հավելված 2-ում առկա տվյալների (կից փաստաթուղթ թիվ 9, արված նշումները), Հրավերի թիվ 7-րդ չափաբաժնի մասով առաջարկված ընդհանուր 6300000 /վեց միլիոն երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի դեպքում պահանջվող՝ թվով 60000 հատ հաբերից 1 հատի գինը կազմում է 105 /մեկ հարյուր հինգ/ ՀՀ դրամ, իսկ Հրավերի թիվ 8-րդ չափաբաժնի մասով առաջարկված ընդհանուր 467500 /չորս հարյուր վաթսունյոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ գումարի դեպքում պահանջվող՝ թվով 55000 հատ հաբերից 1 հատի գինը կազմում է 8,5 /8 դրամ 50 լումա/ ՀՀ դրամ՝ 12.35 անգամ, կամ՝ 1235 տոկոսով ավելի էժան, քան Հրավերի թիվ 7-րդ չափաբաժնի մասով առաջարկված փաստացի լիովին համարժեք ապրանքը:

<<ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/20>> ծածկագրով բաց մրցույթը հանդիսանում է մրցակցային գնման ձևի մրցույթ, սակայն այդ մրցույթի Հրավերը թիվ 7-րդ և թիվ 8-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար՝ որոնք փաստացի հանդիսանում են գնման մեկ առարկա, գնման առարկաների բնութագրերը այնպիսի փոփոխությունների են ենթարկել, որ մեկ գնման առարկան բաժանել են առանձին չափաբաժինների, ինչը արգելվում է ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջով:

6) Կից ներկայացնում եմ բողոքարկման վճարի անդորրագիրը:

Առդիր՝ 16 թերթ:

<<Խաչպար>> ՍՊԸ տնօրեն Սմբատ Բալասանյան

11 դեկտեմբերի 2020թ.

E-mail: khachpar.llc@gmail.com

Հեռախոս՝ 091-45-90-45

<<Ինեկոբանկ>> ՓԲԸ, հ/հ 2050922055871001